ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

«ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ (Կ-1285-17.03.2026-ՊԱ-011/0) ԵՎ ՀԱՐԱԿԻՑ ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՓԱԹԵԹԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿԻ

№	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկություններն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
1.	**ՀՀ կառավարություն**	«Ոստիկանությունում ծառայության մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծի 8-րդ հոդվածի 1-ին մաս	Նախագծի 8-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսվում է, որ այն ամբողջ ծավալով ուժի մեջ է մտնելու պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ կատարողականի համակարգի ներդրումը ենթադրում է փոփոխության ենթարկվող օրենքից ածանցվող ենթաօրենսդրական ակտերի ընդունում, այդ թվում՝ վերապատրաստման և ատեստավորման ինստիտուտների հետ փոխկապակցվածության ապահովման նպատակով, ինչպես	**Ընդունվել է:** Կատարվել է համապատասխան փոփոխությունը:	**Ընդունվել է:**

			նաև՝ ծավալուն նախապատրաստական և կազմակերպչական աշխատանքների իրականացում՝ հարկ է **կատարողականի գնահատմանը և դրա հետ շաղկապված՝ վերապատրաստմանն ու ատեստավորմանը վերաբերելի կարգավորումների ուժի մեջ մտնելու ժամկետ սահմանել 2027թ. հունվարի 1-ը:** Այս լուծումը կերաշխավորի սահուն և արդյունավետ կերպով անցումն այդ նոր ինստիտուտին: Ըստ այդմ, առաջարկում ենք նախագծի 8-րդ հոդվածի 1-ին մասում «օրվանից» բառից հետո լրացնել «՝ բացառությամբ սույն օրենքի 1-ին հոդվածի 1-ին կետի, 2-3-րդ և 5-7-րդ հոդվածների, որոնք ուժի մեջ են մտնում 2027 թվականի հունվարի 1-ից» բառերը:		